


*Hentchak :*ORGANE DU PARTI
RÉV. ARMÉNIEN
HENTCHAKISTE.

ADRESSE

M. BELLART,
85, Peckham Rye
LONDON, S.E.
Angleterre.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԹԻՒՐԿԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մինչդեռ Կովկասում բացվել է ասպարէզ յեղափոխական ընդարձակ գործունէութեան. մինչդեռ ռուսահայ Հնչակեանները, գտնելով այնտեղ բնական դաշտ սօցիալիստական սերմեր ցանելու համար, իրանց ջանքերն ուղղում են այդ մտքով հաւատարիմ արտայայտիչներ յայտնելով իրանց հիմնական սկզբունքների և իրանց բուն աշխարհահայեացքի. մինչդեռ, միւս կողմից, ռուս-ձապօնական պատերազմը, որպիսի էլ ընթացք ու վախճան ունենայ նա Ռուսաստանի համար, իսկապէս առաջ է բերել մի խիստ բարդ և անակնկալներով յղի դրութիւն Ռուսաստանում ներքին ապէս, որը թերեւ լինի ցարիզմի մահազանգակը,—այլ կողմ, միշտ հիւանդ և միշտ մերձի մահ (Թիւրքիայի գլխին շարունակ կռտակած են մնում բօթաբեր ամպեր, շարունակ քաղաքական երկրաշարժները ցնցում են սուլթանական բռնակալութեան հիմքերը:

Մակեդոնական տագնապը տեւում է, հակառակ ռուս-աւստրիական խաբէրայական ծրագիրների, որոնք իրանց ներքին խմաստով ո՛չ մի բարեփոխութիւն չեն բերում Մակեդոնիային: Մակեդոնական անցեալ տարւայ ապստամբութիւնը սպառնում է աւելի ուժգնութեամբ պայթել այս դարնան ևս, այդ արի ժողովուրդը չուզենալով ինքնախաբուսիկ յոյսերով սնել ռուս-աւստրիական օրօրի երգերից: Եւ ահա կանգնած է Թիւրքահայերի առաջ միշտ սպառնական, միշտ մեծ, միշտ տագնապալի հարցը.— ինչ անել, ինչպէս անել, և ե՞րբ անել:

Մենք արդէն առիթ ենք ունեցել բացատրելու նոյն այս սիւնակներում, թէ որպիսի մեծ ու հիմնական նշանակութիւն ունի Թիւրքահայ ազատագրութեան նկատմամբ ցարիզմի անկումը: Բաւական չէ թերեւ ասել այդչափը, որովհետեւ ցարիզմի անկումը կարող է ծախտազրական կերպով առաջ բերել սուլթանականութեան անկում:

Եւ դժուար է տեսնել, սկսած այն օրից՝ ինչ Թիւրքահայ դատի լուծման խնդիրն անցել է ցարիզմի դիպլոմատիայի ձեռքը, այդ դատի էական շահն է ռուսահայ յեղափոխական գործունէութիւնը, որ, ի հարկէ, պէտք է գործադրէ միատեղի կերպով և միացած ոյժերով Ռուսաստանի միւս ազգութիւնների յեղափոխական տարրերի հետ միասին: Եւ որովհետեւ Ռուսաստանի բուն յեղափոխական տարրերի գործունէութիւնը սօցիալիստական է, որովհետեւ իսկական Հնչակեանութիւնն էլ Ռուսաստանում սօցիալիստական է, և պէտք է լինի սօցիալիստական, և չէ՛ կարող չը լինել սօցիալիստական՝ առանց դաւաճանելու իր թէօրիական սկզբունքներին,— այն Թիւրքահայ Հնչակեանը, որ հաւատարիմ է այդ սկզբունքներին, արդէն բաց է տեսնում իր առաջ յեղափոխական գործունէութեան ասպարէզը Կովկասում: Եւ գործելով ցարիզմի դէմ, նա զիտէ, որ միաժամանակ գործում է սուլթանիզմի դէմ,— և այդ հանգամանքը ներկայացնում է Թիւրքահայ Հնչակեանի գործունէութեան մէկ այլ կողմը, որը ծառայում է դարձեալ Թիւրքահայ դատի նպատակներին:

Եւ սակայն, չը նայելով, որ Թիւրքիայում հայերը անպատրաստ գտնւեցան անցեալում ընդհանուր ապստամբութեամբ զիմադրելու սուլթանական հարւածներին. չը նայելով, որ Թիւրքահայ ժողովուրդային ընդհանրութիւնը բաւականաչափ հասունութիւն ու դիտակցութիւն ցոյց չը տւեց իր պատմական մեծ դերում, մի երեւոյթ, որ այնքան զարգացած ենք տեսնում այսօր մակեդոնական ժողովուրդի մէջ,—այնուամենայնիւ, երկար տարիների ընթացքում, կրթւելով յեղափոխական մտքով ու ոգով, այսօր նա իր մէջ կրում է անսպառ ու գործօն ոյժ կենդանութեան՝ ընդունակ թեւադրելու նրա հողին և էներգիայով հրահրելու նրա յեղափոխական ջանքերը: Պատեր անցեալից ապագայի համար, հմտութիւն ունեցած երկարատե յեղափոխական գործունէութիւնից՝ ապագայ գործունէութեան մէջ անսպառ ու յարատե կերպով ընթանալու համար, և մանաւանդ շրջահայեաց ու հմուտ տակտիկա՝ պարզորոշ դիտակցութեամբ յեղափոխական դործի, նրա խմաս-

տի ու նպատակներին, — ահա մեր անկախութիւնը ներկայումս հայ յեղափոխականից թիւրքաց Հայաստանում: Հին տակտիկան այլ ևս միանգամայն պէտք է ձգւէ: Այդ հին տակտիկան գլխաւորապէս հիմնւած էր քաղաքային կազմակերպութիւնների գործունէութեան վրայ, բայց, դժբախտաբար, այդ կազմակերպութիւնները — նշանակելի բացառութիւնները մի կողմ թողնելով — ընդհանրապէս իրանց դերի բարձրութեան վրայ չը կարողացան կանգնել: Նրանք առաւելապէս ստացան տեղական խմբային դրութիւն, որ գլխաւորապէս էր ջանքերն ուղղում էր յեղափոխական պրօպագանդայի գործի վրայ, և այն էլ առաջնապէս քաղաքային շրջաններում, քան բուն ժողովրդային ընդհանրութիւնը զինւորագրելու և զինելու ապստամբութեան գործի համար: Ահա հէնց այս վերջին գործունէութիւնն է, որ այսօր պէտք է ամփոփէ իր վրայ հայ յեղափոխականի աշխատանքը թիւրքաց-Հայաստանում: Զինւորագրութիւն ժողովրդի մէջ և տեսնել ամեն նախապատրաստութիւն թէ՛ զինային, թէ՛ հաղորդակցական և թէ՛ կազմակերպութեան ճիւղերի ներքին յարաբերութիւնների կանոնաւոր մշակման՝ մի կողմից, և միւս կողմից՝ բնաւ չը վատնել ոյժերը մանրամուծը ընդհանրութիւնը քիւրդերի կամ թիւրք օստիկանների հետ, տեղական փոքրիկ, որքան էլ ըստ ինքեան քաջարի, բայց գործի ընդհանուր ընթացքի նկատմամբ աննշանակ, անօգուտ, այլ և գուցէ վնասակար և ուժասպառ կոչւնելով — ահա ընդհանուր խօսքով նոր տակտիկան: Արդէս այդ տակտիկայի և առհասարակ այդ աշխատանքի համանմանութեան համար ամբողջ երկրում, նոյնպէս և ամեն տեղական խմբային դրութիւնից խուսափելու համար՝ պահանջում է, գործի շահ և գործունէութեան զարգացման տեսակէտից, մէկ և ընդհանուր կազմակերպութիւն՝ կենսորոնացման դրութեամբ, որ գործում է յատուկ առաքելային միջոցով, զինւորագրութիւնը կատարելով շրջանակային դրութեամբ, ըստ որում զինւորագրւած անհատները կազմելով շրջանակային խմբեր, պէտք է պատրաստ դառնան սկսելու ապստամբութեան գործը, երբ այդ հարկ և անհրաժեշտ համարւէ կենսորոնական գլխաւոր մարմին և կամ կուսակցութեան համագումարի կողմից, եթէ ժամանակն ու հանգամանքը ներում են այս վերջին պայմանի գործադրութիւնը: Մնացեալ ժամանակը, այսինքն երբ զեռ ապստամբութեան բոլոր պէն հասած չէ նկատում, կուսակցութեան ջանքը պէտք է լինի պատրաստւել, դարձեալ պատրաստւել և միշտ պատրաստւել վերև ներկայացւած նախապատրաստական տակտիկայի համաձայն:

Մի կողմ պէտք է թողնել յեղափոխական թմբկահարութիւնը՝ լինի ապատակային խմբակներով, լինի տեղական խմբերի իրարանցումներով, լինի ամեն տեսակի ֆրագաբանութեամբ, խրոտանքներով ու սպառնալիքներով յեղափոխական մտովում: Այդ ընթացքը միշտ, սկզբից ի վեր, եղել է անտեղի և վնասակար, իսկ այժմ՝ աւելի քան երբ և է: Մի կողմ պէտք է թողնել անժամանակածնունդ և անհիմն, որպէս և յեղափոխական միտքը զուր տեղը զբաղեցնող անգործական և անիրագործելի հարցերը: Հայ յեղափոխութիւնն անցնելու վրայ է իր պատանեկան հասակը և հայ յեղափոխական միտքն իրաւունք ունի այսօր աւելի մեծ պահանջներ դնելու, քան առաջ և աւելի ստորագրելու իրա ներքին իմաստին և իրա որոշիչ տրամաբանութեան յեղափոխականների կամքն ու մասնաւոր փափաղներն ու իղձերը, մի կամք կամ մի փափագ, որ ստէպ, եթէ ոչ միշտ, խախտւա մաքի և անհմուտ քրնութեան ցաւալի դեգերումներ են միայն: Իրականութիւն — ահա՛ գործունէութեան հողը: Թիւրքիայի ներսն ու շուրջը կատարւող դէպքերի ու շարժումների որոշ ընթացքը և դրա հետ միասին թիւրքիայի վերաբերութեամբ եղած եւրօպական քաղաքականութեան որոշ պայմանները — ահա՛ այն բոլորները, երբ թիւրքահայ ապստամբութեան ժամն էլ կարող է հնչել, մի ժամ սակայն, որի համար պէտք է, անհրաժեշտ է ամենից առաջ պատրաստւել, դարձեալ պատրաստւել և միշտ պատրաստւել, առանց փութկոտութեան, բայց ամբողջ ժրջանութեամբ, առանց աղմուկի, բայց և համարձակութեամբ, առանց դեգերման, բայց և շրջահայեցողութեամբ: Թող կորչին ամեն տեսակ կուսակցական զգուշի, ստոր ու յանցապարտ երկպառակութիւններ: Թող կորչին ամեն անտեղի վէճեր, անիմաստ վիճաբանութիւններ, ապարդիւն բանակռիւններ: Թող թիւրքահայ դատի համար գործող ամեն մի ճշմարիտ յեղափոխական, ինչ կուսակցութեան էլ նա պատկանում լինի, իր ոյժը, իր եռանդը, իր միտքը շարունակ իջեցնէ, մուրձի պէս, յեղափոխութեան զնդանի վրայ, կռելով ազատարար զէնքն ատելի սուլթանականութեան դէմ, և այդ, միակ այդ ուղղութեան վրայ ջանայ դնել իր ընկերների և իր կուսակցութեան գործունէութիւնը: Եւ եթէ նա կատարեց իր այդ մեծ դերը, թող դո՛հ ու հպարտ զգայ իրան, որ ծնւել է այնպիսի մի մեծ պատմական ժամանակ, որ զինւոր լինելով մեծ պատմական գործի, կարող եղաւ իր անհատական ամենաբարձր ոյժերը բերել ընդհանրութեան ծառայութեան և նրա ազատագրութեան մեծ գործին:

ՀԱՄՐ

(ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ)

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ հազիւ 25 տարին լրացրած՝ մի ինտելիգենտ երիտասարդ էր: Ծնած էր 1878 թ. Ալեքսանդրապոլ քաղաքում: Ծնողները պատկանում են էսսնաֆ դասին: Չնայած իրենց ո՛չ մեծ նիւթական կարողութեան՝ ոչինչ խնայած էին դաստիարակելու իրանց զաւակները, մասնաւորապէս փոքրիկ Արամը: Կախապէս սովորել էր տեղւոյն ծխական վարժարանում և ապա փոխադրել է իջմիածնի Գէորգեան ճեմարանը, ուր ամեն տարի դասարան փոխելով ամենայն յաջողութեամբ՝ հասել էր Խ. դասարանին և պատրաստուում էր Զ-ի քննութեան, երբ 1895 թ. ճեմարանում առաջ եկաւ աշակերտական մի շարժում ընդդէմ ճեմարանի ղեկավարների, որոնք ամեն կերպ սեղմել էին աշակերտների ազատութիւնը և նրանց մարդամբէնայ էին ուղում դարձնել: Բողոքողների առաջին իսկ շարքում գտնուում էր պատանի Արամը: Երկար կռիւներից և ձիգ բանակցութիւններից վերջը, գրեթէ բոլոր լսարանցիները և դասարանցիներէն այն ամենքը, որոնք չէին դադարել բողոքող լինելուց, տեսչութեան կարգադրութեամբ և կաթողիկոսի հրամանով ճեմարանից արձակեցին: Արձակածների մէջն էր և Արամը: Աշակերտները խմբովին կանցին Երևան, ուր ժողովրդի կողմից կընդունեն մեծ խանդավառութեամբ: Այդ տեղից աշակերտների մի մասը կը ցրեն իրանց տները, իսկ մի խումբ կանցնի Թիֆլիս և մի կերպ զբաղւոյն ունենալով, ինչպէս և Արամը, կը տեղաւորեն Կերսէսեան դպրոցում:

1897 թ. Արամ կաւարտէ Կերսէսեան դպրոցը ամենայն յաջողութեամբ ու կորոնէ միջոցներ շարունակելու իւր ուսումը բարձրագոյն կրթութիւն ստանալու համար, սակայն անկարող կը լինի գտնել մի բարերար, որ օգնէր իրո՞ն, ուստի մի քանի ամիս Թիֆլիսում մնալուց յետոյ՝ կը դառնայ հօր օճախը, որ վաղուց արդէն տեղափոխւել էր Կարս և ապա Կաղզան:

Կաղզանում հասարակութեան խնդրանք նա յանձն կառնէ ուսուցչական պաշտօն՝ նւիրելով միանգամայն այդ նոր կոչման: Ի բնէ օգտուած ժողովրդասիրական մարմնը զգացումներով և լեցած ժողովին ծառայելու անհուն տենչով, Արամը քիչ ժամանակից յետոյ, շնորհիւ իր ժրջան աշխատանքների, դարձաւ ժողովրդի սիրելին: Կա չը գոհացաւ միայն դպրոցական սահմանափակ աշխատանքից, այլ ըսկանց ամառները հետիոտն ման գալ Կարսի և Ալեքսադրապոլի գիւղերը, ուսումնասիրելու համար հայկական ժողովրդական պարերն ու երգերը և հաւաքելու հեքեթներ, առակներ և այլ ասացածքներ:

Այս կարգի ընդարձակ հաւաքածու ունի, որ յանձնած է իր սիրելի ուսուցիչ Ս. Մ-ին՝ հրատարակութեան համար: 1899 թ. նա հաստատեց Բագուում, ուր ծառայում էր X նաւթային ֆիրմայում, կառավարելով նրա նաւթահանքերից միւրը:

Այս է մեր սիրելի ընկերոջ լէզալ կեանքը, այլ սակայն և նա ունեցել է թէև համեստ, բայց օրինակելի յեղափոխական կեանք:

Համար էր կոչւում նա, ու այս անունը ո՛չ թէ իր կնքածն էր, այլ Իջմիածնի ճեմարանում դեռ աշակերտ եղած ժամանակ, սակաւախօս լինելուն, ընկերները զինք մկրտել էին այդ անունով, և նա սիրում էր այդ անունը, զի դա յիշեցնում էր իրան իր պատանեկութիւնը, իր սիրելի ընկերական շրջանը:

Հնչակեան Կուսակցութեան 90—95 թ. ակննների մէջ ունեցած փայլուն գործունէութիւնը չէ թէ միայն Տաճկահայ ժողովրդին էր սիրտ տւել, կեանք ներշնչել, այլ և արտասահմանեան Հայութեան, ինչպէս նաև Ռուսահային: Մեծից մինչև փոքրը, աղքատից մինչև հարուստը, աշակերտից մինչև ուսուցիչը, աշխատում էին մի կերպ անմասն չի մնալ, և զբաղւոյն շատ շատեր նոյն իսկ ակտիւ դեր էին ստանձնում:

Վրանց մէկն էր և մեր եռանդուն Համբը:

Նա՛ էր, որ ոգևորեց հէնց ճեմարանի նստաբանների վրայ եղած ատեն Հայութեան ազատագրութեան գործով ու Հնչակեան դաշափորներով, և նա էր, որ աշակերտական Հնչակեան խմբի կազմը յառաջ բերեց: Համբի առաջին յեղափոխական գործն այս է եղել, որից յետոյ հետզհետէ ընդարձակելով իր գործունէութեան սահմանը, նոյն իսկ Կերսէսեան դպրոցում հանգարտ չի մնար, այլ գտնելով իր նման յեղափոխական ոգի ունեցող ընկերներ՝ միասին կը կազմակերպեն նոյնպէս աշակերտական և բանւորական խմբեր: Սակաւախօս Համբը տեսնել պէտք էր այն պահուն՝ երբ մի գրպանում յՀնչակ՝ կամ այլ յեղափոխական թերթ, միւս գրպանում ծրագիր և կամ մի բրօշուր՝ խանութից խանութ, արհեստանոցից արհեստանոց մեղրի նման կը մտնէր, կենէր: Այդ գործողութեան մէջ նա այլ ևս համար չէր, այլ մի հոգեւոր, մի յեղափոխական, որ խորապէս համոզուած իր քրքրածին, բուռն կերպով առաջ կը տանէր իր պըրօպագանդան:

Կաղզանի իր կեանքը եղել է աւելի ակտիւ և աւելի արդիւնաւէտ, որովհետև այնտեղ թէ կազմակերպական և թէ՛ այլ կարեւոր—զենքի, մարդի փոխադրութեան—գործ կար: Ցորեկը դպրոցում, երեկոյնները շուկայում, խանութներում, իսկ գիշերները այս կամ այն գիւղի ճանապարհին, շատ անգամ մեն մի նախ ինչ կամ այն ինչ ապրանքը պիտի տեղափոխէր:

Վաղը 2 տարի Համբը այդ շրջանի ղեկավարողն է եղել ու միևնոյն ատեն իր շրջանի ամենից սիրելի գէմբերից միւրը:

Ու եկաւ մի օր, որ Համբն էլ ստիպւեցաւ թողնել իր տիրական վայրերը ու գալ Հասնել Բագու, նաւթի շատրուանների հայրենիքը:

Այլ սակայն հազիւ թէ պահիկ մի հանգիստ առած կը թուէր, վրայ հասաւ Հնչակեան չարաբաստիկ Միւսթիւնը:

1902 թ. աշնան Հնչակեան Կուսակցութիւնը գտնւելով խիստ կրիտիկական վիճակում, հարկ անհրաժեշտ էր, որ նրա անցեալին և ապագային նախանձախնդիր ընկերներ մէջտեղ նետուէին փրկելու նրա արիւնոտ Գլօշը:

Ու Համբը որպէս նախկին ղինւոր, անկարող լինելով համբերել՝ մոռացաւ նորից ամեն բան—տուն, տեղ, եղբայրներ, քոյրեր, հայր, մայր և թուաւ ասպարէզ: Ասպարէզ՝ փշոտ, ասպարէզ արիւնոտ...

Մի քանի ամսայ ընթացքում, Համբը կրցաւ իր արժանավայել զիրքը բռնել Բագայ յեղափոխական շրջանում ու՛ր կարող եղաւ իրեն յանձնած բոլոր միսիները ամենապատուաւոր և ամենամաքուր կերպով գլուխ բերել: Վերջին անգամ, Յունիս ամսուն, Բագայի կողմից միաձայն պատգամաւոր ընտրւեց: Եւ իրեն յայտնի եղաւ այդ, սաստիկ տիրեց, զի զգում էր, թէ դժարին գործ էր, որ իրեն յանձնուում էին:

Տառապանքի, թշուառութեան զաւտկը այս անգամ էլ չուղեց կանգնել, դասալիք լինել, միշտ գերազասելով Հայրենիքի ազատագրութեան գործը բարձր, շատ բարձր, քան անձնականը և վերջնականապէս թողուց իր պաշտօնը և մեկնեց Լօնդոն:

Լինելով հոգևոր և սրտով հակառակորդ եղբայրասպան սխտեմին, ու նւիրած լինելով ամբողջ Եռութեամբ բռն զործին՝ այնուամենայնիւ նոյն սխտեմի ծնունդ եղող ոճրագործի սև գնդակի՝ զոհը եղաւ նա:

Օ՛հ, այո՛, բառի բովանդակ նշանակութեամբ և այսօր այդ զոհը կը հանգչի օտար հողի, օտար լուսնի տակ:

Մենք ցաւում ենք մեր պաշտելի ընկերոջ կորուստը, կորուստ՝ խիստ զգալի և կորուստ՝ յեղափոխութեան *:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻԻՐԳԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 30 Յունւար 1904

Այլ հարցնէր, թէ ինչպէս է Պոլսոյ այժմեան վիճակը: Շիտակը ըսելով՝ մարդ կը շուարի, թէ ուկից ոկի և ուր վերջացնէ: Եթէ պատմութեան մէջ փնտրուէինք անուն մը այժու Պոլսին տալու, չը պիտի վարանէինք զայն Ներսէսեան շրջանի Հոռոմ կամ Սողոմ-Գոմոր կոչել:

*) Ուրախութեամբ տեղեկացանք, որ Համբի եղբայրը չէ սպանւած:

Այստեղ ամեն ինչ քմահաճոյք է: Սկսած Երևանի Մեծ Մարզապանէն մինչև յետին թուրք պաշտօնեան կամ ոստիկանը մէյմէկ սուլթաններ են: Վա՛յ ա՛նոր, որ զապիկի մը գէմ կը խօսի, վա՛յ ա՛նոր, որ կուզէ իրաւունքները պաշտպանել: Այդպիսիները ամենէն առաջ աչքերնին պիտի առնեն մի քանի ամիս ծաւր կը նստի: Չեմ ուզեր երկարել, այլ կը թանձ մէկ քանի իրողութիւններ և եղբակացութիւնը ընթերցողներուն կը թողուի:

»Սուրէ՛« մը տալու համար անպատճառ պէտք է թաղի փօլիս քովիւնէր լուր տալ, որ փօլիս մը գայ և տունը նստի մինչև որ սուրբէն վերջանայ:

Պօլիսը-Տէրէ երթալու համար անպատճառ թաղի ոստիկանութենէն հրաման պիտի առնէի, այսինքն տեսակ մը թաղային անցագիր պիտի ստանաւ:

Երկրեցի երթալու համար պէտք է փօլիսխանէին առջևէն անցնի, որ տեսնան:

Գիշերը եթէ ուզես տունէդ դուրս ելնել և ուրիշ տուն մը կամ օթէլ մը գիշերել, անպատճառ նախապէս պէտք է իմաց տաս ոստիկանութեան:

Բամազանի օրերը թուրք հասարակութեան արգելւած է իրարու մօտ հաւաքիլ և ի ֆիթար ընել:

Պոլսոյ քարափը երթալ, շրջապայել գրեթէ անհրաժեշտ է, որովհետև այնտեղ փօլիսներու մի վոհմակ կայ, որը իբր թէ ճամբորդներուն ուտելիք, խմելիք, ծրխելիք և այլն մատակարարելու պաշտօն ունի: Անցորդ-ճամբորդներուն արգիլւած է Պոլիս դուրս ելնել. անոնք անպաշտօն կերպով բանտարկւած պիտի մնան՝ մինչև որ նաւը Պոլսէն հեռանայ:

Երաժշտութիւնը արգիլւած է: Ասկէ քանի մը օր առաջ, տօնախմբութեան մը առթիւ հայու մը տունը՝ 25-ի չափ հայեր հաւաքւած՝ արմօնիկ, քանոն և այլն կը նւագէին և կուրախանային: Մէկ ալ ահա ներս խուժեցին փօլիսները և ներկաներէն շատերը փախազրեցին Պապը-Չապիէ... Ինչոյցը հոն շարունակելու համար, ու... առաւօտուն 5-ական ոսկի տուգանք առնելէ յետոյ արձակեցին զանոնք: Այլ տեսնա՞ք, ինչ հրաշալի ոստիկանութիւն է: Ճէպի հիւսնայունի համար կաշխատին կոր:

Ամենախիստ կերպով արգիլւած է թուրքներուն օղի խմել և փօլիսները խստիւ կը հետևին խմողներուն: Սակայն այդ նոր օրէնքի գործադրութեան հակողները—փօլիսները, քովիւնէրը և այլն—մէկ ալ տեսնես մեխանէին կոնակի կողմէն թըք-թըք դուռը զարնելով՝ »ամա՛ն, այաղընը էօփէյիմ, պիր թէք, վերսենէ... չափօք օլ պէ՛, Օննիկ աղա՛« (օլ ա՛ն Օննիկը այս վայրկեանին աղա կը դառնայ): —Վէլիօրում, էֆէնտիմ, պույուրում»:

Քովիւնէրներու ամօական չի տրւած պարագային՝ անոնք իրենց շրջանակին մէջ գտնւած խառնութեաններէն ամեն օր մէկ քանի օխա լուրիա, բրիւճ, դահլէ, շաքար և այլն ստանալը օրէնք դարձուցեր են: Վա՛յ փօլիսը պարագայ ետ դարձնողին հալին: Օր մը, առտուն կա-

նույն, փոխարին մեկը, ձեռքը ապրանքներու երկար ցանկով մը կը տնկի հայ խանութպանի մը առջև, որը 5 փարայի սիֆթա՛հ ըրած չէր, և կը պահանջէ ցուցակագրածները: Խանութպանը կը դժկամակի և քիչ յետոյ ինքզինքը կը գտնէ հոշակատու Պապը—Ջապթիի չորս պատին մէջ, Յանկը զրկող քովսէրի տեղեկագրոյն վրայ այդ խեղճ հայը վեցուկէս ամիս բանտը կը մնայ և երեսէն վերջն ալ խանութը կը փակէ և կծիկը կը դնէ. ո՛ր,—Աստուած գիտէ:

Անցեալ օրը, գիշերը Ղուսիս-Վարդու սրճարան մը կը մտնեն երեք թուրք սրիկաներ՝ կատարելապէս զինւած և քէօր զինով: Առաջին խօսքերնին կը լլայ «պուկին հանկի կեալուրուն քանընը իչէճէիզ» — «այսօր ո՛ր կեալուրին արինը պիտի խմենք» ու կոկսին հայհոյանքներու տուրակը բանալ: Սեղանի մը շուրջը նստած էին 4—5 հայ երիտասարդներ, որ մասնաւոր ուշադրութեամբ կը հետեւին անցած զարձածին: Յանկարծ որքիկաներէն մէկը մօտենալով այդ սեղանին, շրջակալից ապտակ մը կիջեցնէ նստած երիտասարդներէն մէկին, որը կաշխատի պաշտպանիւ և կը հարցնէ, թէ ինչո՞ւ կը զարնէ: Ատոր վրայ ամենազգեցիկ հայհոյանքներու տեղատարափի մը հետ թուրքը կը քաշէ դանակը, որ զարնէ, սակայն հայը կայծակի արագութեամբ կը թռչի և թէզկեհի վրայ դանակը դանակը խելն ու թուրքին փորը կոխելը մէկ կը լլայ: Թուրքը «մեռայ» կը պոռայ ու կիլնայ գետին: Հայը մէկ ոստիւնով ինքզինքը սրճարանի դրան մօտ կը նետէ: Վրայ կը հասնին թուրքին երկու ընկերները, սակայն առիւծափրօտ հայ երիտասարդը «ալըլըն, հօքա քէսէրիմ» ըսելով, դանակը կը շողացնէ, թուրքերը ետ կը նկրկին և քաշը կը ուսնայ փողոց: Փողոցին մէջ թէև աթոռներ, քարեր կը թափւն խեղճին գլխուն ու տասնեակ փոխաներ հեւ ի հեւ կը հետապնդէին, սակայն ի դուր... Որոք կազատի:

ԱՆՆԿՈՒՆ

Քեմալ, 1904 Յունվ. 5

Մեր կեանքը օրէցօր կը գէշնայ: Որտեղ ինչ պատահի՝ վրէժը մենէ լուծել կուզեն, և եթէ բան մըն ալ չի գտնեն, փառք Աստուծոյ, խնդիրներ անվերջ, անծայր հանելու դժարութիւն մը չկայ, թող սաղ ըլլայ լայեան, գեալուրը. անոր կռնակէն ինչ մարդիկ պէյ, փաշա, և քանիներն ալ հազարաւոր լիրաներու տէր եղած են: Գաղով Տաճիկ կառավարութեան՝ ան իրեն գործը աղէկ գիտէ: Հայը կը բողբէ՝ ինքը կը կողոպտուի, իրէտացին կապտամբի՝ Հայը կը կողոպտուի, Մակեդոնացիք կապտամբին՝ վրէժը մենէ կը լուծէ, մեղի կը կողոպտէ, մեղի բանտերու մէջ կը պառկեցնէ: Ասոնց կաւելցնենք և այն, որ կը

թան կովի պէս ալ պարբերաբար կը կթեն մեր առանց ան ալ աղքատ բնակը:

Տուրքերն ալ չափն ու սահմանը անցեր են. բայցի այն, որ ամեն մարդ որոշ (չատ անգամ էլ անորոշ) նայած թէ ինչ խղճի տէր մարդ է եկող գանձողը) գումար մը կը վճարէ, վերջին ժամանակներս բոլոր կենդանիներէն ալ տուրք սկսած են հաւաքել. քիչ կը մնայ, որ մկներէն, օձերէն, կարիճներէն ալ տուրք առնեն:

Ըսածներս ապացուցանելու համար կը բերենք օրինակներ:—

Ձի, եղ, կով՝ 10-ական շրուշ, էշ՝ 3 շրուշ, այծ՝ 4 շրուշ և 10 փարայ և այլն, և այլն, խնկ հաւաք, սագ՝ փողին տեղ ապրանքէն կառնեն:

Ասոնք ասանկ ըլլալէ զատ՝ ծխախոտ փախցնող լազերն ալ երբեք օր մը հանգիստ չեն թողուր մեզ, անոնք ալ երկրորդ կառավարութիւն մըն են, երբեք մէկէ մը վախ չունին, ո՛չ Աստուծմէ ու թագաւորէ կը վախնան, ո՛չ ալ մարդոցմէ կամենան: Օր չըլլար, որ ծխախոտի խնդիր չըլլայ: Պատմեմ գէպք մը, որ տեղի ունեցաւ Դեհտ. 15-ին: Վարի Բագառիճ գիւղը այդ օրը 15 լալ զաւախճիներ կուգան: Գիշերը կը մնան գիւղը և կը հիւրասիրին գեղացիներէն: Առաւօտուն գիւղի քահանան և ծերերը, երբ եկեղեցիէն դուրս կենէին, յանկարծ այդ լազերը կը յարձակին ատոնց վրայ ու կը բռնեն և յետոյ կը տանին խանը կը բանտարկեն: Ասկէ զատ կստիպեն անոնց, որ իրենց ծխախոտները գնեն և փողերը իրենց տան, որ իրենք երթան, ապա թէ ոչ՝ կսպառնան ամեն կարգի գէշութիւն ընել: Գիւղացիները — ծեր, երիտասարդ, կիւն, տղայ — այս բանը լսելով, կը յարձակին լազերու վրայ և պաշարելով կսպառնան խանը քարիւղով վառել: Լազերը տեսնելով գիւղացիներու այս զայրոյթը, կը ստիպուին արձակել քահանան և իր ընկերները: Ասոնց մէջ կար նաև Տաճիկ մը: Լազերը գիւղէն կը մեկնին:

Հայերէն ոմանք լազերու կատաղութիւնը մեղմացնելու համար կերթան ճամբու գնելու: Գիւղէն երբ քիչ մը կը հեռանան, լազերը կը բռնեն հայերէն մէկը, կը կսպեն և հետերնին առած կը տանին մէկ ժամ հեռու գտնւած Ս. Նշան վանքը ու լաւ մը ծեծելէն, ըթէն բերնէն արին հոսեցնելէ վերջ՝ թող կուտան:

Միւսնոյն կերպով կը վարին վանքին մէջ: Գիւղի մէջ չը յաջողածնին, վանքի մէջ յաջողեցան, այսինքն բռնի 100 հօխա ծխախոտ կը ձգեն վանքը և առանց դրամը ստանալու կը մեկնին: Շաբաթէ մը յետոյ լազերը աւելի մեծ թուով կուգան դրամը գիւղացիներէն պահանջելու: Գիւղացիք այս անգամ վախճուով անոնց բազմութենէն՝ կստիպուին իրենց ուղած փողը վճարել:

Այս տեղէն կանցնին Վերի Բագառիճ գիւղը, ուր կը ձգեն 200 հօխա ծխախոտ, ամեն մէկ հօխային իրենց ուղած գինը նշանակելով:

Վառավարութեան դիմելը կատարեալ անխելքութիւն է, որովհետեւ ան ալ ըսելով թէ՛ «ինչո՞ւ փախստական ծխախոտ կը գնէք»՝ նոր տուգանք մը պի-

տի առնէ: Այսպէս ուրեմն, երկու կառավարութիւն ունինք, մէկը Սուլթանի, միւսը շահերունը:

Սէր բոլոր գաւառը այս խեղճ ու անտանելի դրութեան մէջ է:

Ասոնց վրայ կաւելցնենք նաև քիւրտերը, որ իրենց ցորենը, գարին կուգան բռնի իրենց ուղած գրնով կը ծախեն և ետ դառնալնուն ալ չեն մոռնար ոչխար, ալծ, ևայլն թուցնել, տանիլ:

ԱՆԱԳ

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎԱԿԱՍԻՑ

Բագու, 9 փետր. 1904.

«Արջք օրհասականը հզօրագոյնս կուին ի հասանել օրհասին»:

Հեռաւոր արեւելքի պատերազմը սարսափ ձգեց ուս մօնարկի վրայ: Ճապոնացիները վառւած հայրենասիրական զգացմունքով՝ հէնց առաջին քայլից նրան խօստովանել տւին ցարի բերանով՝ «Նաչ վրագ սիլէն» — մեր թշնամին ուժեղ է: Ասոնց այն էլ ցնորւած ցարը շտապեց իր հրովարտակներով հայրենասիրական զգացմունք առաջացնել դարերով արիւնը ծծած ժողովրդի մէջ: Նա առաջ մղեց քաղցածների (բօսնականների), կաշառակերների ու ձրիակեր պօլիցիականների վոհմակը՝ տալով նոցա ձեռքը երաժշտասուսմբ և իր պատկերը: Ատաղկեղդական ու զլելի էր, երբ այդ ստոր արարածներն իրանց կապկուլթիւններով շրջում էին փողոցները և շարունակաբար «ուրա»ներ վատնում՝ քաշելով իրանց յետեւից փողոցների թափառաշրջիկներին: Ժողովրդի զայրոյթին չափ ու սահման չկար: Վերին աստիճանի ատելութեամբ էին թափօրին վերաբերւում բոլոր ազգութիւններն անխտիր, մանաւանդ ուս բանիմաց տարրը: Ժողովուրդը բաւականանում էր այդ կապկային խմբի անցնելու ժամանակ միայն երեսը դարձնել: Գրութիւնը նորից պարզուեց...

Ժողովուրդն այդ կապկուլթեան անտարբեր վերաբերւեց՝ հարկաւոր էր ուրեմն դիմել տպագրութեան և հոգեւորականութեան աջակցութեան: Եւ լըրագիրները լեցեցան — «Ժողովուրդը յուզւած՝ հայրենասիրական զգացմունքով ցոյցեր է անում» և «հոգեւորականութիւնը ծնկաչոք Աստուծոյ օգնութիւնն է խնդրում...» Օտար ազգերը լռում էին, լուռ էին նաև «ի խորոց սրտի խոցեալ» հայերը: Սակայն ամսոյս 2-ին պնակալէզ-վարձկան տեղական ուս հոգեւորականութեան պարագլուխ հայր Իւնիցկին ծնկաչոք մաղթանքից յետոյ — մուսնալով քրիստոնէական պարտականութիւնը — քարոզով յորդորեց համախմբւած բօսնականներին «քիչնեան ու Գօմելեան կոտորած առաջացնել հայերի մէջ, որովհետեւ նոքա չեն ցանկանում Աստուծոյ զայրոյթի առաջն աղօթքով առնել և ցա-

րին երկար օր խնդրել»: Քարոզի լուրը հայ բուրժուազիայի վրայ սարսափ ձգեց և 12 ժամ չանցած՝ նա հայ հոգեւորականութեանը առաջ մղեց մաղթանք կատարելու: Հետեւեալ առաւօտեան լրագրներում՝ ամէն առաջին տեղը տպագրւած էր մի յայտարարութիւն, որով այդ բուրժուազիան — թագնւած հոգեւորականութեան փէշերի տակ — հրաւիրում էր հասարակութեան նոյն օրն իսկ, ժամը 1-ին, կատարելիք մաղթանքին մասնակցել...

Հարկաւոր էր ականատես լինել, թէ ինչպիսի բողոք էր բարձրացել 10,000-ի չափ հաւաքւած ամբոխի մէջ, որը վերաւորւած սրտով և ամենաարդար իրաւունքով բողոքում էր մաղթանքի դէմ՝ յիշեցնելով կառավարութեան այն աւաղակութիւնն ու կոտորածները, որոնք կատարւել էին միայն մի քանի տասնեակ օր առաջ, աւաղակութիւն և կոտորածներ, որոնց նոյն ամբոխը դէմ էր տւել իր կուրծքը և մարմնը արիւնով պաշտպան հանդիսացել իր իրաւունքներին և դարերից ի վեր իրեն աւանդ մնացած տաճարին, որի գլխութեանն է դիմում այժմ այդ ծիրանաւոր շարագործը... Բայց արդէն ուշ էր, բողոքը մնաց լոկ բողոք, իսկ հայ հոգեւորականութիւնը իր սարկական դերը վերջացնելու վրայ էր, երբ նետւած պայթուցիկ ուժերի հարւածը գետին թաւալեց տասնեակ անմեղների դիակը:

Այստեղ մի գիշերայ մէջ պարսիկները սրի անցրին ուս կառավարութեան 4 ագէնտներին, որոնք փոքրիկ ազգերին իրար դէմ գրգռելու ստոր և դատապարտելի պաշտօնն ունէին: Սա մի ապտակ է անսթաբիլ կառավարութեան երեսին և երաշխաւորութիւն կովկասեան ցեղերի եղբայրութեան ընդհանուր թշնամու դէմ:

Յարն «ամենաողորմածաբար» հրամայել է, որ նախ ոչ ոք իրաւունք չունենայ արքունի գանձարանում ունեցած իր դրամը յետ ստանալ և երկրորդ՝ ագէնտների միջոցաւ սպանալիքներով դրամ հանգանակել:

ԲՆՈՒԹԱՅԻՍԸ իր արդար բողոքը սուրբներով արտայայտեց՝ խանգարելով մաղթանքը գիմնադիայի մատաղ սերնդի միջոցով, որը չկարողացաւ տանել բունութեամբ կատարուող այդ արարողութիւնը, որի հետեւանքն եղաւ գիմնադիայի փախիլը և ապա նրա իբրեւ իր սուրբ նպատակից շեղւած մի հիմնարկութեան — անմիջապէս հրգեհակն ուսանողների կողմից:

ԲՆՈՒԹԱՅԻՍԸ յետ չմնաց: Մաղթանքի օրը ժողովրդական մասսան կատաղութեամբ յարձակեց հոգեւորական դասի վրայ, ջարդեց նրան ու փշրեց կայսրի պատկերը:

ԽԱՐԿՈՎՈՒՄ՝ ոտնատակ տւին կայսրի պատկերը և նորա տեղ բարձրացրին յեղափոխութեան կարմիր դրօշակը:

Աժբողջ Ուսաստանում՝ ժողովուրդն այսպէս է պատասխանում ցարի կոչին:

ԽԱՆՏԻՍԵ և ԽԱՆԿԱԿԱՐ քաղաքները խիստ

Հսկողութեան տակ են գտնուում, որովհետեւ ենթադրուում է, թէ այդ կողմի ժողովուրդը կողոպտելով Ալեքսանդրապոլի փամփուռները պահեստը պատրաստուում է յարձակում գործել կառավարութեան վրայ:

Անգրիկական երկիրը մեծ թւով զօրք է տեղափոխուում, որովհետեւ սպասուում է ապստամբութիւն այդ շրջանում:

Մ — ՊԵՏ

Ա... 12 փետր. 1904.

Հիւսիսային Արշի կառավարութիւնը երբեք այնքան լրբաբար ոտնատակ չէ տւել տիրող օրէնքները, որքան ներկայումս, և ոչ մի հպատակ ժողովուրդի վերաբերմամբ չէ ցոյց տւել նա այնպիսի բացարձակ ճշունւմ, որպիսին նա գործ է դնում այսօր Հայերի վերաբերմամբ:

Այն, ինչ երէկ թողատրելի էր մեզ ուսուցողութեան կողմից, այսօր միևնոյն բանը արգելում է մեզ նոյն կառավարութիւնը: Եւ այդ ոչ — ինչպէս սովորաբար անում են ցարի ստորադրեալները, նրա պնակալէզ, սեփական կամքից զուրկ պաշտօնեաները — ոսկեզօծած բառերով ու «հաղորդագրութիւններով», այլ բացէ ի բաց զլանալով մեզ մեր անբռնաբարելի իրաւունքները:

Վէպի Հրէայ ժողովուրդն ունեցած ատելութիւնը, անվերջ ոտնձգութիւնները կը նսեմանան մեր դէմ ունեցածի առաջ: «Հրէաներն, այսպէս թէ այնպէս, էլ ի մի կերպ տանելի հպատակներ են, ասում էր Կուբանի նահանգապետ գեներալ Մալաման հայերի մասին խօսելիս մի պաշտօնեայի հետ, — ինչ վերաբերում է արմեաշխաններին, սրանք ժողովուրդը տւին մեզ մեր բոլոր հպատակ ազգութիւնների ըմբոստ արարքները և... այդ իսկ պատճառով նրանք (հայերը) այսօր ներկայանում են որպէս ամենամիասակար և անտանելի տարրը ուսուցչապատակների մէջ...»:

Եթէ սա լինէր մի Մալամայի և կամ մի Լեւիցիու զուտ անհատական, մասնաւոր կարծիք, մենք ոչ մի ուշադրութիւն չէինք դարձնի նրա վրայ, բայց, դժբախտաբար, այդ համոզմունքով վարակւել են բոլոր ուսուցչապատար անձինք, որի շնորհիւ էլ Արշի թափը օրէցօր անսովոր սաստկութեամբ ծանրանում է ուսուցչային, որպէս և մեզ մօտ ապաստանած թշուառ տաճկահայերի գլխին՝ ճնշելով, կատարելապէս իրաւագուրկ, արնաքամ դարձնելով մեզ:

Հայ և ուսուցչական յարաբերութեան մէջ շնորհիւ կառավարութեան, վերջերս բացւած անջրպետն այնքան մեծ է, որ տեղի է տալիս հազար ու մի տխուր, սարսափելի ենթադրութիւնների... — Թիւրքիայի անցքերը կրկնւելով չեն և այստեղ, անցնում է մեր ներկայ վիճակին ծանօթ եղողի մտքից... և այդ հասկանալի կարող է թւել...

Վիճում էր կառավարութեան՝ յիշատակեալ Վրացական Ատեանի պաշտօնական տեղեկութիւնների համեմատ (1903 թ.) կազմած հայերէն պիէսաների ցանկը՝ ձեր ձեռքին և խնդրում թողտուութիւն այդ ցանկում նշանակած այս կամ այն պիէսը ներկայացնելու համար: Գուր հաւատացած էր, որ մի քանիսն ունենում էր վերջանայ ամեն բան և «թողտուութեան համար» 1 բուրլի 20 կօպէկը վճարելով՝ կերթաք ձեր դործին: Բայց ո՛չ. պարոն ոստիկանապետը հարկ է համարում տալ ձեզ մի քանի հարցեր — Ինչո՞ւ էր ուղում հայ լեզուով տալ ներկայացումը և ոչ «ամենքին մատչելի» — իմա՛ ուսուցչ — լեզուով: — Թէ ինչո՞ւ ձեր յիշած պիէսն էր ընտրել և ոչ, օրինակ, այսինչը, որ պ. ոստիկանապետի կարծիքով աւելի նպատակաւոր կը լինէր ներկայացնել: — Թէ ինչո՞ւ վերջերս «հայերի» սկսել էր պարբերական ներկայացումներ ու երեկոյթներ կազմակերպել և այդ այնքան շուտ, որ մարդ զարմանում է: — Թէ՛... թէ՛... Եւ կաշխատի ամեն կերպ, որ առնւազն իր կարծիքը չըժանի դէպք — իր առաջարկած պիէսն ընտրէ: Վերջապէս մի կերպ ստանում էր թողտուութիւն պիէսի համար, բայց դեռ պէտք է հաւատացնել պ. ոստիկանապետին, որ ներկայացման մասնակցողները «կասկածելի» մարդիկ չեն, կարծէք բառերը «կասկածելիների» բնութանում ուրիշ նշանակութիւն կատանան, քան պիէսումն են նորա...

Վկասում են ձեր բնակարանում մի քանի գրքեր և պարբերական հրատարակութիւնների հաւաքածօններ, ամենքն էլ անցած ցենզուրի բովից, որոնք խիստ անհանգստութիւն են պատճառում ցարի ստորադրեալներին: Նրանք քայլ առ քայլ հետեւում են, որպէսզի ձեր գրքերից չօգտեն ուրիշ մարդիկ: Եւ մի գեղեցիկ օր «պաշտօնեաները շնորհ են բերում ձեզ մօտ, խնդրելով՝ որ թող տաք իրենց աչքից անցկացնելու ձեր ընտանեկան գրադարանը: Վա՛յ ձեր օրին, եթէ այդ գրքերի շարքում կը գտնեն նորա թէկուզ մի պարզ գրացուցակ, որը վաւերացւած չէ Գրաքննական Ատեանից: Այնուհետեւ միայն «ոսկորն» է, որ կարող է լինում փրկել ձեզ անտանելի վիրաւորանքներից, բանտարկութիւնից, նոյն իսկ գանահարութիւնից, որ ըստ օրինի արգիւրւած է Ռուսաստանում...»:

Մի քանի ծանօթներ մէկտեղ եկել, խօսում էր դուր ձեզ համար, և ահա՛ ձեր քթի տակ սուսկ կի նման կը բուսնեն գաղտնի ոստիկանը (լիազօրութիւն ունենալով ձեր բնակարանը ձեզ) և լրտեսը: Բայց այդ ձրիակներն ինչո՞ւն է այն աստիճանի անշնորհ է տանում իր դերը, որ դուր առաջին իսկ վստիկանին կը կուսէր նրա ինչ մտքով ձեզ մօտենալը: Շատ բան էլ հարկաւոր չէ նրանց կասկածանքին ենթարկւելու և ըստ օրինի պատժուելու համար. ո՛չ, բաւական է, որ ձեր բերանից դուրս գան սօցիալիստ, հասարակապետաբիւն, յեղափոխաբիւն, ցոյց, ստաղինստ և նման բառեր, ու իսկոյն կը հրաւիրւիք դուր ու-

տիկանատուն՝ բացատրութիւն տալու ձեր խմբելու և խօսակցութեան մասին... Ելի՛ ոսկորը — կաշառքն է, որ կարող է հանել ձեզ անասորժ գրութիւնից:

Մանաւանդ ներկայումս մղող Ռուս-ճապոնական պատերազմի յայտարարելուց յետոյ՝ իսկի չէ կարելի աչք բաց անել աներես լրտեսներից, որոնք մեծեղի նման վիտում են ամեն կողմ: Ճապոնացիները կրած ծանր կորուստների «հայիֆը» մեղանից պատի հանէ կարծես:

Առ հասարակ պատերազմի մասին խօսելը վտանգաւոր է մեղանում, իսկ եթէ կը համարձակուի խօսել իրականութիւնից — եթէ կը խօսէք ճապոնիայի զէնքի յաջողութեան մասին, իսկոյն կը ձերբակալեն ձեզ որպէս «հակահաւաքարական մարդ», մինչև որ դահաճ աքէսին վճարելով կը հաստատէք ձեր անմեղութիւնը:

Հեքեաթների սեզօնն սկսել է:— Ռուսաստանի թերթերը սրբագրւած հեռագիրներով խիստ ծիծաղելի կերպով խեղաթիւրում են պատերազմական բեմի վրայ տեղի ունեցող իրողութիւնները և ռուսական զէնքը դուրս բերում միշտ կտրուկ, միշտ յաղթող:

Հայ ժողովրդի վարկը վար ձգելու և ռուս հասարակութեան վատ կրքերը հայոց դէմ գրգռելու համար յերկրում են դիտաւորեալ, հրէշային սուտեր, որպէս թէ հայերը մի քանի հազար հոգով դիմել են ճապոնիային և առաջարկել իրենց ծառայութիւնը ընդգէմ ռուսաց: Այդպէս և, իբր թէ, հայերը՝ նկատելով Ռուսաստանի կրիտիկական գրութիւնը Հեռաւոր Արեւելքում, ուզում են օգուտ քաղել պատեհ առիթից և Հայ-Արացա-Պարսկական ապստամբութիւն առաջ բերել Վովկասում, ևայլն ևայլն: Ռուս միամիտ ժողովուրդը հալած իւրի տեղ է ընդունում այդ չարաստութիւնները և սնուցանում իր կրօնի տակ անսահման ատելութիւն դէպ իր հայրենակից հայր: Արդէն ամեն տեղ խօսւում է բացէ ի բաց, օր ցերեկով, որ շուտով հայկական կոտորած է լինելու Վովկասում և հարաւային Ռուսաստանում, որ շուտով հրաման դուրս կը գայ բոլոր հայերին անխտիր Ռուսաստանից քշելու:

Որքան էլ և՛ աշխատում ենք առաջն առնել այդ լուրերի ստրածման, զուր է անցնում մեր աշխատանքը և Հայութիւնը սարսափով սպասում է սև օրերի... Այնպիսի ժամանակի ենք հասել, որ մարդիկ երանի կը տան Գժոխք-Թիւրքիայում անցկացրած օրերին: Եւ այդ զրութիւնը, երևի, կը տևի մինչև այն ժամանակ, երբ ռուսական փտած գահի հետ կը կործանւի և՛ մարդակեր միապետութիւնը, որից յետոյ միայն կը կարողանանք ազատ օր տեսնել:

Մի նորութիւն ևս:— Վովկասի կառավարչապետ Գալիցինի հանած շրջաբերականի հիման վրայ՝ թէ՛ Վովկասում և թէ՛ հարաւային Ռուսաստանում կանչում են հին և նոր տաճկահայտակ հայերին, ցուցակագրում նրանց մանրամասնօրէն և առաջարկում «կամ անպայման հեռանալ Ռուսաստանի սահմաններից և կամ անմիջապէս ընդունել ռուսահայտակութիւնը»: Խեղճ

տաճկահայերի գրութիւնը աւելի քան կրիտիկական է:

Մի խիթարական է, սակայն, որ այսպիսի դժոխային պայմաններում Հայութիւնը փոխանակ վհատելու՝ իր կրօնի տակ սարսափի հետ սնուցանում է և՛ խորին գիտակցութիւն, և՛ գոյութեան կուռում չընկճելու համար փրկարար էներգիա, որոնց շնորհիւ մենք ամենայն իրաւամբ սպասում ենք Հայութիւնից ապագայում ցանկալի պարտաճանաչութիւն և յեղափոխական դրական գործունէութիւն:

ԻԻՊԻՑԵՐ

ՌՈՒՍ-ԵԱՊՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

1. ԿԱՊԻՏԱԼԻՉՄ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ

Ռուսա-ճապոնական պատերազմ — արնալի արշալոյսն է գալիք մեծ դէպքերի: Նա չէր սպասւում, և սակայն նա առաջ էր գալիս օրինակերպ ընթացքով ու ըստ պառնական, իբրև անողոր օրհաս: Նա նախապատրաստւում էր ռուսական միապետութեան աւազակային քաղաքականութեամբ, կապիտալիստական շահագործութեամբ, կոլոնիական ընչաքաղցրութեամբ, նա նախապատրաստւում էր աւելի Եւրոպայում, քան Ասիայում, նա նախապատրաստւում էր Ամերիկայում: Կապիտալական արդիւնաբերութեան պէտքերը, մէկ արդիւնաբերութիւն՝ որ անընդհատաբար ինքն իրան է լայնում, կործանում էր՝ արած իր գոյութեան սկզբունքը, ապա մրցում էր հրահրում է քաղաքական թշնամանքը, նոյնպէս նախակապիտալական կուլտուրա ունեցող երկիրների հասարակական կազմի խախտումը, անգլիական ինկվիզիցիոն գերմանական միլիտարիզմը, հողատէրերի շահերը Պրուսիայում և շաքարի պլանտատորների շահերը Վուրթեմբերգում, ամերիկական ջինգոիզմը և ռուսական գանձի պարտքի տակ խեղդելը, Եապոնիայի զարգացումը և Թիւրքիայի յետամնաց վիճակը, վրիժառութեան դադարը և Ֆրանսիական բուրժուազիայի կռիւն պրուլետարիատի հետ, — այդ ամենը, ապա և շատ ուրիշ երևոյթներ, որոնք առաջ են գալիս կապիտալիստական զարգացման տնտեսական ու քաղաքական հակասութիւններից, նախապատրաստում էին պատերազմը, և այդ ամենը միմեանց հետ խառնել են, խճճել են ու կապել արեան հանգոյցով, որը պահանջում է արեան լուծում:

Ֆրանսա-Գերմանական պատերազմը, 1870 թ., վախճան դրեց այն պատերազմների շրջանին, որոնք ըսկըսել էին Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնից և ձեւել ու ձեւակերպել էին Եւրոպայի քարտէզը: Իտա-

լիայի, որպէս և Գերմանիայի միաւորութիւնը, որ առաջ եկաւ զուգընթացաբար Ֆրանսիայի, Աւստրիայի և Ռուսաստանի (Խրիմի պատերազմում) տկարացումով, ստեղծեց Եւրոպայի ներկայ քաղաքական հասարակչութիւնը: Եւստ խախտու հաւասարակշռութիւն, որովհետեւ գերմանական ժողովրդի մի մասը բաժան մնաց միաւորութեան Գերմանիայից, Աւստրիան էլ, կորցնելով իր կապը գերմանական ժողովրդի մեծամասնութեան հետ, դարձաւ երկիր միմեանց անգամալուծող ազգութիւնների կտորասնքների, Ֆրանսիան պատրաստու էր յետ առնել իրանից խլած դաւառները, իսկ Բալկանեան թերակղզում ինքնուրոյն մի Զուլապտանի ստեղծւիլը, որը սակայն սահմանափակեցաւ փոքրիկ կտոր հողով, մինչդեռ հելլենական ազգի կարեւոր մի մասը մնաց և մնում է թիւրքական տիրապետութեան ներքոյ—այդ բոլորն էլ աւելի բարդեց առանց այն էլ խճճաւ զրութիւնը: Իսկ այդ ամենի վրայ, իբրեւ յարատեւ սպառնալիք խաղաղութեան, կախւել է ռուսական միապետութիւնը—հարկւր միլիոն ժողովրդի ոյժերը մի միակ անձի իշխանութեան տակ ընկած,—միապետութիւն՝ որ միշտ դիտող է՝ պատրաստ պոկելու մի կտոր հող, ատող Արեւմտեան Եւրոպայի նոր կարգերը, այսինքն այն ձեւական ազատութիւնները, որ ձեռք են բերել ժողովրդները,—միապետութիւն՝ որ անընդհատ բազմապատկում է իր պատերազմային ոյժերը, բացարձակ նպատակ ունենալով ենթարկել իր ազգեցութեան Եւրոպան և ամբողջ աշխարհը: 1877 թ. ռուսա-թիւրքական պատերազմը նորից յիշեցրեց Եւրոպային, թէ որպիսի մեծ վտանգ է սպառնում նրան ցարի կառավարութեան կողմից:

Քաղաքական հաւասարակշռութիւնն այնքան անհաստատ էր թւում, որ այդ ամբողջ ժամանակը Եւրոպան տենդային ջանքով պատերազմական պատրաստութիւններ էր տեսնում: Գոյացան ահագին զորքեր, մարդասպանութեան և կործանման արեւատը, հասաւ կատարելագործութեան մինչև աներևակայելի նրբութեան, պատերազմային պաշարները բազմապատկւում էին և անընդհատ վերանորոգւում — և ստացեցաւ «զինւած խաղաղութիւն», որ իր անհատապի, միշտ աճող, անտանելի ծանրութեամբ ճնշում էր ժողովրդներին: Եւ միևնոյն ժամանակ՝ տէրունական իշխանութիւնն աւելի ռամկավարական դարձնելու գործը, որ գրաւական էր խաղաղութեան, կասեցաւ: Այն ժամանակից ի վեր, ինչ կազմակերպւած պրօլետարիատն անցել է պարլամենտական երկիրների քաղաքական կեանքի ասպարէզը, բուրժուազիան այլ ևս իրա համար չա՛հ չը տեսաւ քաղաքական ռամկավարական կարգերի մէջ և սկսաւ դառնալ աւելի և աւելի յետադիմական: Դնդուստրիայի զարգացումը բաժան երկիրներում ստեղծեց համաշխարհային վաճառանոցի վրայ մրցումն կապիտալիստական ազգերի միջև. հողից բուսած, դեռ ամեն ահեղատի անձանօթ, ամբրիկական հացը կտորեց եւրոպական հողատէրերի հողային ռէնտան — և այդ տեղից ծագեցան մաքսային սիստէմներն Արեւմտեան Եւրոպայում: Այդ տուրքերը դարձան տնտեսական խոչնդոտներ ժողովրդների կուլտուրական միաւորման պատմական պրօցէսի առաջ, նրանք կրկնապատկեցին պետութիւնների քաղաքական խզումները և ստեղծեցին բազմութիւ նորանոր, միմեանց հա-

կառակ, շահեր: Ազգերի կապիտալիստական մրցումը, քաղաքականապէս զատուած գրութիւնը, միլիտարիզմը, բուրժուազիայի յետադիմական նկրտումները — բոլորը միասին նպաստում էին կառավարական իշխանութեան զօրացման, այնպէս որ մինչև իսկ Գերմանիայում սահմանադրական հողի վրայ մօնարխիզմը սկսաւ աւելի ծաղկել: Իսկ որքան աւելի են զօրանում կառավարութիւնները, այնքան աւելի դիւրին են առաջ գալիս ընդհարումները պետութիւնների մէջ:

Եւրոպական խաղաղութիւնը պահպանւում էր շնորհով իր հաւասարակշռութեան խախտու լինելուն: Զգացում էր, որ բաւական է նրան խախտել մի տեղ, որպէս զի առաջ գայ ընդհանուր շարժում: Դա, ի վերջոյ, դարձաւ ընդհանուրի համոզումը և մինչև մի յայտնի աստիճան եղաւ դիպլոմատական յարաբերութիւնների ղեկավարող թելը: Բուրժուազիայի հասարակական կարծիքը, վախկոտ ու դիւրահաւատ, որ փոքրիկ ծիւղիկներով տարածւում է դէպի լայն, բայց որ անընդունակ է թափանցելու խորը, հանգարտեցաւ այն փաստի վրայ՝ որ խաղաղութիւնը չէր խախտւում, իսկ նրա իդիօզգները, որ իրանց պատմական հայեացքները յարմարեցնում են յայտնի րօպէին և իրանց թղթէ փիլիսօփայութիւնը տալիս են բամուն, ինչպէս տղաքները թղթէ թռուցիկները, ստեղծեցին մի թէօրիա, պատերազմի անկարելիութեան թէօրիան: Այդ թէօրիան առաջադրում էր ժամանակակից զէնքի կործանարար արտակարգ ոյժը, ժամանակակից զօրքի արտակարգ ահագնութիւնը, ժամանակակից ինդուստրիական պետութիւնների մէջ պատերազմի աներևակայելի կերպով ջանջախիչ լինելը: Պատիկ ու երկչոտ խելքը դատում էր այսպէս.—որովհետեւ եւրոպական մի պատերազմի հրէշաւորութիւնն անցնում է իմ երևաւ կայութեան ամեն չափը, ուրեմն այդպիսի պատերազմ չէ էլ կարող տեղի ունենալ:

Մինչ այդ՝ կապիտալիստական զարգացումը շարունակում էր իր կործանարար գործունէութիւնը և Եւրոպայի խաղաղութեան սիւներն էր խախտում մինչև ամենահեռաւոր սահմանները — Խաղաղ Ովկէանոսի երկիրներում:

Պայլեց չինա-եւասիական պատերազմը: Կապիտալիստական զարգացումը շարունակում էր անպասելիութեամբ, բայց աւելի ևս նրանով, որ մօնղոլական ցեղերի մէջ պատերազմը մղւում էր կապիտալիստական ինտերէսների համար: Եւրոպան մինչ այդ ժամանակ յատկապէս իր կուլտուրական միասնան էր համարում կապիտալիստական շահագործութեան տարածումն ամբողջ աշխարհում, մինչև իսկ կարծես թէ այդ գործը համարում էր կուլկասեան ցեղի մի առանձնայատկութիւն և նոյն իսկ քրիստոնէական կրօնքի մէկ առաւելութիւն: Եւասիայի առեւտրական առող պատերազմն ապացոյց եղաւ այնպիսի արդիւնաբերական շահերի, որոնք ենթադրում են կապիտալիստական զարգացման մի նշանակելի աստիճան և ցոյց տուեց — հէնց այդ էլ ամենագլխաւորն է,—որ Արեւելեան Ասիայում կազմւել է մէկ ինքնուրոյն պետութիւն, կապիտալիզմի քաղաքական և զինւորական ամեն ձեւերով, բոլորովին եւրոպական օրինակով: Դա նոր ֆակտոր էր Ասիայի պատմութեան մէջ, մի ֆակտոր, որ պէտք է խառնէր ու սրէր ամեն յարաբերութիւն չեռաւոր Արեւելքում:

Երկրորդ անգամ ի դեպքն էր Ամերիկայի և Սպանիայի պատերազմը: Միացեալ Նահանգները ինքուստրիական զարգացումը գաղտնիք չէր սչ որի համար: Բայց և այստեղ բուրժուական միտքը հաղիմ հաղ կարողանում էր գնալ փաստերի ետևից և անգոր էր հանդիսանում ընդգրկելու զարգացման ընթացքը: Քանի որ բուրժուական յեղափոխական էր, նա կարողանում էր մտքով թափանցել ապագան, որովհետև դա իր սեփական պատմական ապագան էր, իր տիրապետութիւնն էր, իր յաղթանակն էր: Իսկ ներկայումս մտքի ընդարձակ դիտողութիւնը միայն խանգարանք է բուրժուականին, որովհետև նա ցոյց է տալիս բուրժուականի պատմութեան անկումը, — և ահա ինչո՞ւ բուրժուական իդէոլոգիան, որ իր հայեցակէտը կարող է հիմնել միայն այն տափակութեան վրայ, որի վրայ կանգնած է իր դասակարգը, ստիպողաբար սահմանափակել է իր հօրիզոնները: Ապանա—ամերիկական պատերազմն ապացուցեց, որ կապիտալիստական զարգացումն արդէն Միացեալ Նահանգների տնտեսական կեանքի կենտրոնակէտը գիւղատնտեսութիւնից փոխադրել է ինդուստրիայի վրայ: Իսկ գրաւ հետ միասին աւելի պահանջէր դարձան արտահանութեան և կոյտնիսկան քաղաքականութեան շահերը: Գրաւ առաջին հետևանքը եղաւ կոյտնիական պատերազմ, իսկ աւելի ուշ՝ պէտք է լինէր միլիտարիզմի զարգացումը: Եւ այդպիսով ստեղծուեց չինգոֆոմը: Միացեալ Նահանգները սկսան մղել յարձակողական արտաքին քաղաքականութիւն և մինչև անգամ փորձեր են անում խառնելու եւրոպական դործերում: Բայց նրանց գլխաւոր ուշադրութիւնն ուղղւած է խաղաղ Ուկրաինայի երկիրների վրայ, որոնք իրանց տնտեսական և աշխարհագրական դիրքով յայտնում են ամենայնայնուրեւ վաճառանոցն ինդուստրիական Ամերիկայի համար: Եւ ահա ինչո՞ւ ներկայ ուսում—եւրոպական ընդհարման մէջ Ամերիկան, հէնց սկզբից ի վեր, խաղում է գործօն դեր, որպիսին դեռ տասն տարի առաջ անհնարին կը թուէր:

Այդ ժամանակներն էլ աւելի և աւելի որոշ կերպով նկատուել սկսաւ համաշխարհային վաճառանոցի վրայ կատարուող յեղաշրջումը: Ամերիկայի գիւտը հեռացրեց առևտուրը Միջերկրականից և խաղաղ Ուկրաինայի երկիրներից և ինդուստրիայի շարունակական զարգացման հետ Ատլանտեան ուկրաինայի դարձրեց կենտրոնավայր ծովային առևտրական յարաբերութիւններին: Փոքր և Արևմտեան Ասիան (Պարսկաստանը) բոլորովին ձգւեցան իսկ մի կողմ: Օստ—Հնդկաստանի կոյտնիական նշանակութիւնն այդ երկրի նկատմամբ ապահովեցրեց ամեն յարաբերութիւն Եւրոպայի հետ, իսկ գրաւ շնորհով էլ սկսան նոյնպէս զարգանալ յարաբերութիւններ 2ինաստանի հետ: Կապիտալական արդիւնաբերութեան աճումը, որ պահանջում էր աւելի և աւելի ընդարձակ վաճառանոցներ, պէտք է առևտուրը ուղղէր նորից դէպի խաղաղ ուկրաինայ: Այդ պրոցէսն աւելի արագացաւ Սուէզեան ջրանցքի բացումով: Եւ առաջ եկաւ ահադին միջազգային ծովագրանցութիւն Հնդկական ուկրաինայում, և Հարաւային ու Արևելեան Ասիա արագ կերպով սկսան դառնալ ինդուստրիական: Առանց Սուէզեան ջրանցքի, նկատելի էր դէպ, Եւրոպայի մինչև այսօր էլ դեռ մնացած կը լինէր մի յետամնաց տարական երկիր: Բացի Եւրոպայի

յից, Հնդկաստանն էլ զարգացրեց իրա մէջ սեփական հարուստ ինդուստրիա: Նոյն այդ ընթացքում են գտնուում նաև Աւստրալիան և Աֆրիկայի Հարաւային ափը: Այս վերջինում, ինչպէս յայտնի է, կապիտալի յեղափոխական գործն արդէն հասցրեց մինչև արեան լուծման: Ամբողջութեան համար նկատելի նոյնպէս, որ կապիտալիստական յեղաշրջումն Աֆրիկայում աւելի արագացաւ և ընդունեց սուր կերպարանք շնորհով օսկեհանքերի բացման:

Խաղաղ ուկրաինայի առևտրական զարգացումը նորից բարձրացրեց Միջերկրականի նշանակութիւնը և այս վերջինով՝ Բալկանեան թերակղզիի և Փոքր Ասիայի նշանակութիւնը: Արևելեան հարցը, եւրոպական ընդհարումների այդ գործեան հանգոյցը, աւելի ևս սուր կերպարանք ստացաւ շնորհով առևտրական շահերի: Ազգայնական կռիւներն էլ առաջ էին գնում իրանց կարգով: Ռուսա—թիւրքական պատերազմը դէն հրեց Թիւրքիային Բալկանեան լեռների միւս կողմը և դարձրեց նրան անձարակ: Գաւ ծառայեց յօգուտ քրիստոնէական ազգութիւնների: Այդ դրութիւնից առաջինն օգուտեց Բոլգարիան, միանալով Ռումէլիայի հետ: Գրան յաջորդեցին կրէտական ապստամբութիւնը, ապա մակեդոնական ապստամբութիւնը (և հայկական շարժումները): Յունաստանի փորձը—միացնել իրան Արեւելն՝ անաջող եղաւ ոչ միայն նրա զինուորական զօրութեան ոչնչութեան և անկազմակերպ վիճակի շնորհով, այլ և Ռուսաստանի ծնշման շնորհով: Յարի կառավարութիւնը գիտակցաբար պահպանում է եւրոպական խառնակութիւն Մօտ Արևելքում: Կաղտնապէս նա գրգռում է դէպի ապստամբութիւն և միաժամանակ արգելք է լինում նոր անկախ բերստոնէական տէրութիւնների ստեղծման: Այդպիսով նա կազմալուծում է գոյութիւն ունեցող քաղաքական ոյժերը, խոչընդոտ է լինում նորերի զարգացման և Բալկանեան թերակղզիի ազգութիւններին պահում է փոխադարձ տկարութեան հաւասարակշռութեան մէջ: Նպատակը պարզ է — դիւրացնել երկիրն իր ձեռքը գցելու ճանապարհը, երբ հարկ լինի վերցնելու և Պօլսը:

Անգլիայի և Ռուսաստանի մէջ եղած վաղեմի միջադէպն այնքան ահեղ է, որ կառավարութիւնները գրան արդէն աւել են ազգային թշնամութեան բնաւորութիւն: Վէճը և Պօլսի վրայ է և դրա հետ կապ ունեցող քաղաքական վերակազմութեան վրայ Թիւրքիայում: Այդ վէճը, ինչպէս յայտնի է, իր ժամանակին եղաւ պատճառ Խրիմի պատերազմի: Այդ օրից ի վեր դրութիւնը չէ լաւացել, այլ և ընդհանրապէս, աւելի սուր կերպարանք է առել, շնորհով այն հանգամանքի, որ 1877 թ. պատերազմից ի վեր Թիւրքիայի դիմադրական զօրութիւնը բոլորովին ոչնչացել է: Թիւրքիայի ամբողջութիւնը յայտնում էր այնպիսի միջադէպ պայման, որ շարունակ ձգձգում էր վերոյիշած միջադէպի լուծումը — իսկ այժմ Անգլիան և Ռուսաստանը կանգնած են անմիջական կերպով իրարու դիմաց և անխուսափելի կերպով օտարաբան կը լինեն լուծել վէճը զէնքի զօրութեամբ: Եւ սակայն Ռուսաստանի և Անգլիայի ընդհարման շրջանն ընդարձակում է Թիւրքիայից նաև դուրս: Ռուսաստանի աշ-

խարհակալ քաղաքականութիւնը Միջին Ասիայում հաս-
ցրել է այդ շրջանը գրեթէ մինչև Հնդկաստանի սահ-
մանները: Անգլիան ստիպւած է ո՛չ միայն հեռացը-
նել Ռուսաստանին Միջերկրականից, այլ և նրա դէմ
պաշտպանել իր ամենագլխաւոր կօշտիւնը: Միեւնոյն
ժամանակ Ռուսաստանը մօտենում է Պարսկական ծո-
վածոցին: Իսկ մինչ այդ՝ Միջին Ասիան և Պարսկաս-
տանը, և փոքր Ասիան ըստ ինքեան, ստացել են մին-
չև այժմ չը նախատեսւած արդիւնաբերական նշանա-
կութիւն՝ շնորհով առևտրի զարգացման խաղաղ
ովկիանոսում: Գա առանձնապէս կարևոր է Անգլիա-
յի համար, որ ընդհանուր մրցման մէջ իրան ճնշ-
ւած է զգուժ համաշխարհային վաճառանոցի վրայ:
Բայց միեւնոյն շահերն էլ գրաւեցին դէպի այդ եր-
կիրները նոյնպէս երկու ուրիշ ինքուստրիական պե-
տութիւնների ուշադրութիւնը—Գերմանիայի և Անգ-
լիայի: Եւ ահա՛ սրանք էլ սկսան խրել այդ միջա-
դէպերի նոր հանգույցը:

Եւ ի վերջոյ, գոյացաւ մէկ այլ ընդհարում՝
Անգլիայի ու Ռուսաստանի միջև Հեռւոր Արեւել-
քում:— Չինաստանի «ամբողջութեան» խնդիրը:

(կը շարունակւի)

ՊԱՐՏՈՒՄ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԲԱՐԱՀԱՆՔԻ Մ-դի զանձարանում ստացել են
1903 Օգոստոս 6—1904 Յունվար 1-ը:—

Տուման խ. 8 ր, կարկուտ խ. 3 ր. 50 կ, Պա-
տանեաց խ. 3 ր. 50 կ, Բաջաց խ. 8 ր. 60 կ, Արշա-
լոյսից 25 ր, կարկուտ և Տուման խ. 5 ր. 50 կ, Շա-
ւարշան խ. 11 ր, Առիւծ խ. 16 ր 50 կ, Պատանեաց
խ. 4 ր. 30 կ, Բաջաց խ. 30 ր. 80 կ, Շաւարշան խ.
16 ր. 50 կ, կարկուտ խ. 13 ր. 50 կ, Առիւծ խ. 3 ր. 50 կ
Բաջաց խ. 8 ր 50 կ, Տուման խ. 3 ր, Նւէր Բրիւնքի-
ից 32 ր. 46 կ, Առիւծ և Բաջաց խ. 11 ր. 50 կ, Նւէր
Եկատէրինատարից 21 ր, Տ. Արարատից 300 ր, Գ. Ա.
րաքսից 1200 ր, մի ապրանքի վաճառումից 13 ր.

Գումար 1739 ր 66 կ.

ՆՈՐ-ՆՈՐԱԳՈՒՄ Մ-դի զանձարանում ստացել են—

Մինչև 1904 փետր. 1 հանգանակւած է 116 ր.
փետր. 1-ից յետոյ ստացել են հետեւել նւերները—
Չէյպէկ, Գուրգէն, Թաթէ, Բարախոտ 10-ական ր, Ա-
րարատ, Մուշեղ, Թօռուն, Շղթայ, Համազասպ, Եբքեմ,
Սասունցի, Արամ, Վարանցով 5-ական ր, Երանդ 4ր,
Հահէն, Միհրդատ, Պարոյր, Արաքս 3-ական ր, Ալիա-
տաւոր, Հմայեակ, Արշակ, Շմաւոն, Բոթան, Սեպոհ,
Գեռ 2-ական ր, Զարման 1 ր. 50 կ, Փայլակ, Հրա-
ցան, Արտաշէս, Վառկան, Յօլակ, Ալեօր, Արփակ, Ա-
րամ, Փիւրակ, Պատկեր, Մասիս, Շէկոյ, Երկաթ, Յո-
րակ, Բաբէկէն, Գաբաօ, Սիմոն, Սոփակ 1-ական ր. 4մր.
134 ր 50 կ, Դարնաղեաց խ. փետր. ամս. 5 ր. 50 կ
Սիւնեաց խ. փետ. ամս. 9 ր 50 կ, Հայկակ խ. փետ. ամս
6 ր. 50 կ, Արշալոյս խ. փետ. ամս. 5 ր. 50 կ. Ընդհ.
գումար 277 ր. 50 կ.

ԵՒՔՍԻՆԵԱՆ Մ-դի զանձարանում մինչև 1903 Թ
Յունիսի սկիզբն ստացել են.—

Ղախորդ Հաշից 9. ֆ 60 ս, փայլուն 6 ֆ, Վարդա-
գոյն 9 ֆ, Գուրեան, Սուրէն, Չիթենի, Ալանդակ, Վ. Բե-
րունի, Օ. Յակոբ 3-կն ֆ, Երանդ 4 ֆ, Ծիւրանի, Մկ-
րատ, Արամ Վահուն 2-կն ֆ, Մաշտոց 5 ֆ, Գողթան,
Ատրուշան, Վահագն, Ս. Մարգար, Արծիւ, Դ. Յակոբ,
Արշակ, Ռշտունցի 1-կն ֆ. ԴՈՒԺԻԿ խ. Փրփուր, Ա-
րափայլ, Խանդ, Շուշանց, Սալուկեցի, 5-կն ֆ, Նշոյլ 6
ֆ, Բարակոփ, Հայրենասէր, Սամսոն, Վրիժաու 4-կն ֆ.
Յուսատու, Վարդգէս, Անի Աւերակ 3-կն ֆ, Պալքանոր-
դի 2 ֆ, Կայծքար, Սիմէօն Ծերունի, Ծիւածան, Ա. Վա-
հէ, Ալանց 1-կն ֆ, Վիճակահանութիւնից՝ Գուժիկի միջ.
14 ֆ, Հանգանակութիւնից 112 ֆ. 50 ս, Բօնսթանձայից
100 ֆ, Նւէր 2 ֆ 45 ս. Վիճակահանութիւնից 50 ֆ. Գմր.
409 ֆ. 55 ս.

Մ—ՊՈՒՄ Մ-դի զանձարանում ստացել են.—

Ծաղիկ 5 ր, Բարէօրտ 3 ր, Զարդ, Կիւլանը 2-կն ր,
Արդկաց, Նոր-Փարիզ 1-կն ր. Գմր. 14 ր.

ԱՐԵԳԱԿ Մ-դի զանձարանում ստացել են.—

Հահնազար, Բադրատ, Սէրտէր 2-կն ր, Դերադ, Դը-
ժոխը, Սուլիկ, Միհրդատ, Բէյ, Լուսով, Խան 1-կն ր, Ա-
րապօ, Վահագն, Արծիւ, Վրէժ, Արշակունի, Արթիւրին,
Էլոյ, Ատոդ, Աքաղաղ 50-կն կ, Նորեկ 40 կ. Գմր. 17 ր 90 կ

Հ. Յ. Հնչակեան և Հ. Յ. Դաշնակցական Կուսակցութեանց
ներկայացուցիչներ Պ. Պ. Հրահատ-Կամսարի և Վարդոյի, ինչ-
պէս նաեւ Շումլայի երկու կողմի մարմիններու համաձայնու-
թեամբ ու համերաշխութեամբ հանգանակութիւն մը կատարե-
ցաւ Հայ հասարակութեան մէջ, արդիւնքը եղաւ վեց հարիւր
երեսուն և չորս ֆրանք 65 մմթ. (634 ֆ. 65 մմթ.):

Այս գումարի կէսը ստացել է Շումլայի Հ. Յ. Հնչակեան
Կուսակցութեան Մամուլաճիւղը:

1903 Դեկտ. 30
Շումլա

Հ. Յ. Դաշնակցութեան
Շումլայի Ենթակոմիտէի
Քարտուղար Պ. Պոյաճեան

Այս հանգանակութեան մամուլեցել են—

Թ. Հ. Ս. 50 լէվ, Եղբարք Պ. 40 Լ, Յ. Բ. 40 Լ, Գ. Մ. Պ. Ի. 30
-ական Լ, Մ. Գ. Կ. Ա. Գ. և Գ. Ա. Ա. Հ. Թ. Գ. Ն. Վ. 20-կն
լէվ, Եղբարք 2. 20 Լ 15 ս, Յ. Պ. Հ. Պ. և Որդի, Օ. Ա. 15-կն Լ
Մ Մ. Գ. Թ. Վ. Մ. Ս. Հ. Ռ. Հ. Ա. Կ. Դ. Խ. Գ. Թ. Գ. Պ. 10-
ական Լ, Ա. Մ. 7 Լ Բ. Ս. Հ. Յ. Պ. Ա. Խ. Մ. Թ. Յ. Թ. Ս. Պ
Ա. Ա. Մ. Յ. Փ. Եղբարք Շ. և Յ. Ս. Ն. Հ. Եղբարք Գ. Մ
Գ. Ա. Մ. Մ. Գ. Մ. Խ. Ս. Գ. Յ. Ա. 5-կն Լ Պիթլիս սրճարա-
նի Հայաստանցիներից 5 Լ Հ. Յ. Եղբարք 8 Լ Ա. Յ. 4 Լ Մ
Հ. Յ. Մ. Մ. Յ. Ս. 3-կն Լ Գ. Բ. Հ. Գ. Գ. Կ. Գ. Մ. Հաճի 17
Հ. Մ. Մ. Մ. Բ. և Եղբարք, Գ. Պ. Տ. Յ. Տ. Հ. Ա. Շ. Փ. Լ
Մ. Գ. Յ. Մ. Մ. Բ. 2-կն Լ Մ. Ս. Պ. 2 Լ 50 ս, Կ. Պ. Խ. Թ
Մ. Շ. Յ. Խ. Կ. Ս. Տ. Մ. Գ. Ն. Ն. Բ. Մ. Յ. Ս. Ս. Յ. Յ
Հ. Ս. Յ. Խ. Մ. 1-կն Լ Ս. Յ. Թ. Մ. 50-նկ ս. Գմր. 634 ֆ 65 ս

ԻՌԻԳԱԶՈՒՄ պ. Հրահատ-Կամսարի ձեռքով հան-
գանակւած է.—

Ոմս 20 ֆ, Ն. Յ. և Ն. Գ. և Լնկ. 15-կն ֆ, Գ. Խ. Զ. Մ.
Զ. Բ. Ոմս, Ոմս, Թ. Խ. Ա. Բ. Կ. Ա. Խ. Մ. Մ. Ա. Մ. Գ.
Պ. Տ. Հ. Յ. Ս. Ոմս, Մ. Յ. 10-կն ֆ, Խ. Մ. 6 ֆ, Ա. Պ. Ա. Կ.
Ոմս, Մ. Յ. Գ. Յ. Մ. Ս. Ա. Վ. Ե. Մ. Կ. Պ. Ոմս, Ոմս, Գ. Պ.
Գ. Թ. Յ. Ս. Ոմս, 5-կն ֆ, Վ. Ա. Մ. Ս. Խ. Մ. Ս. Հ. Մ. 4 ֆ Ոմս.
Ոմս 2-կն ֆ, Մ Զ. 1 ֆ: Դումար 312 ֆ.

ՓԱՐՈՍ Մ-դի զանձարանում ստացել են.—

Ս. Ա-ից 1000 ր, Ա. Ռ-ից 500 ր, Լ-ից 300 ր. Թ-ից 100 ր-
«Առիւծ» խ. ամսավճարներից 15 ր 80 կ, խմբ. ամսվճ. 27 ր
Բնաբարքի խմբի ամսավճարներից 20 ր: Դմր. 1962 ր. 80 կ

ՍԻՆԻՍՏԻԻ ԺԷՂ Կ. Հրահատ Կամարի բացած Հանգանակութիւնից ստացել են.—

Տիկ. ՀԺ. Զարիֆ ՀԺ. Համարձուցման 25 լէվ. Ա. Փափագեան, Զաւրի, Սար 10-ին լէվ. Ա. Միսասեան, Սիմոն Ժ Պարալեան, Սիւստրեցի Ուն, Պ. Կ. Պապիկեան, Զաւար Մ. Թօփ-սարալեան, Կ. Ս. Թօփսարալեան 5-ին լէվ. Կարապետ Դար-րիւնեան 4 լէվ. Թաղէոս Մարգարեան, Արթուրի, Կ. Պօ-ղոսեան, Թաղուր Յովակիմեան, Օ. Ս. Փափագեան 3-ին լէվ-Յակոբ Յարութիւնեան, Ուղունեան, Դանիէլ Զարուկեան, Յո-վակիմ Լալեան, Յ. Փափագեան 2-ին լէվ. Յովհ. Լալեան 1 Է 50 ա, Յովհ. Գ. Յովհաննէսեան, Ժանիկ Երվանդեան եւ Մար-գիս Մարգարեան 1-ին լէվ. Դմր. 118 լէվ 50 մնդ.

ՍԻՆԻՍՏԻՍ Մ-ՂԻ Գանձարանում ստացել են.—

ՎԱՍՊՈՂԻՐԱՎԱՆ Խ. Միսրիստ 50 ֆ, Տրդատ 40, Օրէնս 25, Արմէն, Սուրճաղակ, Սիւրբարդ, Թաթուլ 10-ին ֆ, Վարուք Ընծակ, Պալկայ 5-ին ֆ. ՄԱՍԻՍ Խ. Մամիկոն 15 ֆ, Հայկակ, Քոնո 10-ին ֆ, Արարատ 6 ֆ, Ռոբովամ, Վարդո, Խորէն, Ժո-վասար, Արծիւ, Պետո 5-ին ֆ. ՀԱՅԻԿ Խ. Խոնորիկ 20 ֆ. Կայծքար 10 ֆ, Երկաթ, Անտոն, Աշոտ, Արամ, Երուսաղ, Զա-ւէն 5-ին ֆ, Զաւիկ 5 ֆ. Ժանիկ 3 ֆ. ԿԱՅԺԱՎ Խ. Գրիգոր 50 ֆ Վաղարշ 20 ֆ, Ռուբէն, Հանաւորատ 10-ին ֆ, Փայտ 6 ֆ, Մկօ 2էրգէզ, Վահան, Միսրոպ 5-ին ֆ. ՎՐԷԺԱՌՈՒ Խ. Մըրիւն 25 ֆ, Վահրամ 20 ֆ, Վարդան, Բեադ 10-ին ֆ. Պօլատ 5 ֆ Նարինձ 10 ֆ. Վրէժ, Գնդակ, Պարխօ, Աշոտ Գարեգին 5-ին ֆ. ԶԱՆԱՄԷՐ Խ. Վահրիժ 15 ֆ, Տանծենի, Նատո, Վա-հէ 5-ին ֆ, Նաւաստակ 5ֆ., Արծիւ, Առիւծ, Լեւոն 2-ին ֆ Մուշեղ Մարգարեան 50 ֆ, Հանգանակութիւնից 241 ֆ. Ներիւն են — Միսաս Պօղոս. 15 ֆ, Տէր Յակոբ քնյ., Սահ. Ալվ., Սէֆ, Խաւ., Յարթ. Չատի., Խա. Մաւ., Յարթ. Օհա. 10-ին ֆ, Մարգ Վարդ. 20 ֆ, Արմ. Սենն., Գրիգ. Ման. 6-ին ֆ, Ս. Մկր-եանի անկողի գին 7 ֆ, Պօղ. Ման., Ուն, Մուր. Պա., Ղազ. Սեվ. Գրիգ. Սեվ., Խաւ. Գիւլ., Աբ. Ժաղ., Սար. Փեր., Մարտի Պետ, Մարտի. Մուր., Աբ. Նիկ., Ման. Մարգ., Յովհ. Եղա., Մուր-եղա., Դա. Պետր., Յովհ. Սիմ., Աւ. Աբ., Յակ. Յարթ., Աւ. Գրիգ., Մարտ. Բարս., Մարգ. Յակ. 5-ին ֆ, Տիկ. Թոր., Սիմ. Դուկ., Խաւ. Կլա. 3-ին ֆ, Ստե. Մար., Թով. Յակ., Յովհ. Ա-սատ., Ման. Երեց., Ստեփ. Կար., Խաւ. Կար. 2-ին ֆ, Յարթ Առա. 1 ֆ. Ընդհ. Գմր. 857 ֆ.

ՍՕՖԻԱՅԻ Մ-ՂԻ Գանձարանում ստացել են 1903 Յուլիս 1—Դեկտ. 31 —

Աղաւաղմարները 373 ֆ 65 ա. եւ Ներքերը 401 ֆ 60 ա-Գումար 775 ֆ. 25 ա.

ԼԵԱՐԱՏԵԱՆ Մ-ՂԻ Գանձարանում ստացել են.—

Արդիւնք երկուրորից 12 ր. 20 Կ, Այանլու գիւղից Նէր 4 ր 26 Կ, եւ 2 ր, Ժամացոյցի վիճակախաղից 4 ր, Մուշեղից Նէր 1 ր. 30 Կ, եւ 2 ր, Ընկերական խնջոյքում Նէր 4 ր. 10 Կ, 1903 Յունվ. անդամավճարներ 6 ր, Ընկերական խնջոյքից 6 ր, „Հրազդան“ Խ 3 ր. 50 Կ, Կրկին 9 ր. եւ 3 ր. 50 Կ, „Հրազդան“ Խ. երկուրորից 24 ր. 95 Կ, „Արար“ Խ. փետր. վճար 3 ր, „Մասիս“ Խ. փետր. եւ մարտ վճարներ 6 ր, չորս անդամների Ապր. վճարներ 2 ր 50 Կ Մասիսի վիճակախաղից 20 ր. 40 Կ, Վաղ. գիւղի „Արծւաքեր“ Խ Նէր 1 ր, „Խաւ“ շրջիկի միջոցով 60 Կ, „Արթարան“ Խ. տօնա-վաճառից արդիւնք 35 ր 74 Կ, ութ անդամների Ապր. վճարները 4 ր. գումար 156 ր. 5 Կ: (Շարունակելի)

ԿԵՏԱԲԵՐԱՆ Մ-ՂԻ Գանձարանում ստացել են—

Ա. Միսրեան 1903 Յունիս 1-ը— Յանձնախումբ Խ 54 ր 60 Կ, Ռոտ-ման Խ. 49 ր 80 Կ, Զաւարի Խ. 33 ր 40 Կ, Երիտասարդ Խ 36 ր 60 Կ Վրէժ 54 ր 80 Կ, Պալկուցիկ Խ. 34 ր 10 Կ, (6 ամսվճ.) Հարազատ Խ 25 ր (4 ամս.), Կայծակ Խ 14 ր 40 Կ, Առիւծ Խ 15 ր, Հարազատ Խ մուտք 31 ր, Զաւարի եւ Երիտասարդ Խ 22 ր 50 Կ, Զանազան տ-13 ր, Վրէժ 7 ր 20 Կ, Վոթման 5 ր 40 Կ, Ղ. Վարդանեան 4 ր, Խէշօ 3 ր 60 Կ, Տիգրիս 5 ր, Վիճակախաղ 5 ր 40 Կ, Պատանք Յունիկ 1 ր Գրքօ, Զարմայր 4 ր, Տիկ. 3 ր, Գ. Սաֆար, Տիկ. Խ-ից, Կօփ. Մա-նուկ, Քեղարքայապետ 2-ին ր, Զար. Լուծֆիկ 1-ին ր, Եփրատ Խ-մուտք 19 ր 20 Կ: Գումար 452 ր-

Բ. Յանձնախումբից 6 ամս. վճ. 37 ր 80 Կ, Կոկորդիլոս 6 ամս. վճ. 30 ր. 20 Կ, Աւլանի ծեռ. Ներսիս Խ, վճ. 29 ր 20 Կ, Վր-լէժ Խ. եւ Հարազատից 6 ամս. վճ. 28 ր 80 Կ, Հանգանակու-թիւնից 25 ր 6 Կ, Երիտասարդ Խ. 4 ամսվճ. 22 ր 80 Կ, Աւլան 20 ր 20 Կ, Ուն 20 ր եւ ուն 9 ր, Սազօ 17 ր, Զաւարի Խ-4 ամսվճ. 12 ր, Մօսօ 11 ր, Երկաթ 10 ր, Ծահիկ Աւետիս 6 ամսվճ. 7 ր 20 Կ, Վահէ եւ Խաւօ 6 ամսվճ. 6 ր 60 Կ, Նշա-

նից 5 ր 20 Կ, Բաֆրապէտէն, Վաղարշակ, Սարհատու, Մօտ-կից Գրիգոր Գարօ, Վահէ 5-ին ր, Աստան 4 ր, Լեոնից 3 ր 60 Կ Մուտք, Բաղնիկան 3-ին ր, արգ, Մամուէլ, Զաւէն, Արտաւազդ Պարթեւ, Հայրենիք 2-ին ր, Վահէ 2 ր, Աթէից 1 ր 90 Կ, Մուրժ 1. 80 Կ, Խորէն 1 ր 20 Կ, Մեւ, Վաղարշակ, Մուրժ, Պալկի, Սիւ-տակ Մար, Առիւծածեւ, Պողոստ, Զէյտան, Բոց, Աւտորիայ, Մալխաս, Կորիւն, Ամիրսակ, 1-ին ր, Ժարտար, Տէրսիմ, Ժառ 50-ին Կօպէկ, Նանգանակութիւնից 44 ր 7 Կ: Դմր. 443 ր 33 Կ

ՆՈՐ--ՆԱԻԱՀԱՆԳԻՍ Մ-ՂԻ Գանձարանում ԸՍ-տացել են.—

Շէն գիւղի „Մասիս“ Խ. 13 ր 60 Կ, Բ. վիճակախաղից 10 ր 28 Կ, Պ. Վարդից ղեկտ. ամսվճ. 6 ր, Վաշտօպետից Օգոս-—ղեկտ. ամսվճ. 5 ր, Արարատից 1903 ղեկտ.— 1904 մարտ ամս 4 ր, Պ. Սողոմից սեպտ.—նոյ. ամսվճ եւ Զէյթունցից 3-ին ր, Հին հաւելից (Ս. Վահագնի ծեռքով) 2 ր 19 Կ, Մուշեղ, Մորակ (Ղեկտ. նոյ. ամսվճ.), Դասապարեան 2-ին ր, „Մանուկ Հայաստան“ եւ „Պատանի Հայաստան“ Խ. նոյ. ամսվճ. 2 ր 15 Կ, Եգիպ-տացի, Հին Ընկեր, Մուշեղ, Մազ, Միսնայ, Վրէժխաղիք, Ե-րիտասարդ, Թաթուլ, 1-ին ր, Վախկոտ 61 Կ, Կայծակ 60 Կ, Խալտերից 50 Կ: Դմր. 64 ր 93 Կ.

ՍՈՒՐԱՏ Մ-ՂԻ Գանձարանում ստացել է.—

„Երվան“ Խմրից 93 ր. 80 Կ.

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ Մ-ՂԻ Գանձարանում ստացել է.—

Պր. Դ-ից 150 ր.

Կուսակցութեան ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ Գանձարանում ստացել են Հեռեհալ գումարները.—

Մ-ից („Կենտրոնականի“ միջոցով)	-	-	1000 ր.
ՄՈՒՐԱՏ Մ-ղից	-	-	200 ր.
ԲԱՆԻՈՐ	-	-	100 ր.
ՆՈՐ--ՆԱԻԱՀԱՆԳԻՍ	-	-	50 ր.
ՓԱՅԼԱԿ	-	-	20 ր.
ՍՈՒՆԻՍՏԻ	-	-	857 ֆ.
ՎԱՌՆԱՅԻ	-	-	65 Լ.
ԲՈՒՐԵՐԵՐ	-	-	60 ֆ.
ՄԱՐԱՀԱՅԻ	-	-	36 ամս. ոս.
ԲՈՒՄԺՈՒՐԻ	-	-	4 ոս. 16 Զ.
ԲՈՒՐԳԱՋԻ Հանգ. Պ. Հ. Կամարի ծեռավճ	-	-	312 լէվ
ՄՂ-ից	-	-	113 Լ 50 ա.
ՇՈՒՄԼԱՅԻ Հանգ.	-	-	317 Լ 33 ա.
ՄԻԼԻՍՏՐԵԻ	-	-	118 Լ 50 ա.
Բուրգազ Արմենական Պ. Մ- Յարութիւնեանի մօտ գտնաւ	-	-	120 Լ 50 ա-ից - 60 Լ 25 ա

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սրանով պաշտօնապէս յայտարարում ենք, որ Նախկին կենտրոնական վարչութեան կողմից տրւած այն ամեն վկայագրերը, որ մինչև ներկայ թիւը կը կրեն Հնչակեան գործիչներն՝ իբրեւ ներկայա-ցուցիչներ կամ գործիչներ, այլ ևս կորցրած են իրենց զօրութիւնը և կը համարեն չեղեալ:

Ներկայ թիւէս սկսեալ ամեն հարկ եղած Հն-չակեաններին կուղարկեն պաշտօնական նորոգւած վկայագրեր Հնչակեան Կուսակցութեան նորընտիր կենտրոնի կողմից:

Կենտրոնական վարչութիւն

Հնչակեան Կուսակցութեան